

«Արտոնյալ Հաշիվ»

Ծառայության Մատուցման Պայմանագրի Ձև

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել անժամկետ «Արտոնյալ Հաշիվ» ծառայություն www.pages.am վեբ-կայքում (այսուհետ **Կայք**), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար: Նշված ծառայության ակտիվացումը հնարավորություն է տալիս Պատվիրատուին կառավարել իրեն տրամադրված համացանցային էջը՝ ըստ Կայքի համապատասխան բաժնում ընդունված ձևաչափի և հնարավորությունների:
- 1.2 Ծառայությունը մատուցված է համարվում էջի կառավարման ակտիվացումից անմիջապես հետո և կարող է դադարեցվել միայն Պատվիրատուի լուծարման, գործունեության կասեցման, դադարեցման կամ այլ պատճառով՝ Պատվիրատուի գրավոր պահանջի դեպքում: Ծառայության մատուցումը կարող է կասեցվել կամ դադարեցվել նաև Պայմանագրի 3.1.3 և 5.1 կետերի հիման վրա:

2. Պայմանագրի գինը, վճարման ժամկետները և կատարումը

- 2.1 Ծառայությունների մատուցման գինը կազմում է **60 000 ՀՀ դրամ** (*վաթսուն հազար*), ներառյալ ԱԱՀ՝ 10 000 ՀՀ դրամ:
- 2.2 Ծառայությունների մատուցման գումարը պետք է վճարել պայմանագրի ստորագրումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, Կատարողը կտրամադրի Պատվիրատուին օգտագործման **Լոգին և Քաղտնաբառ**՝ էջի կառավարման համար:
- 2.3 2.2 կետի լրիվ կատարումից հետո ծառայությունը համարվում է մատուցված, որից հետո Կատարողը Պատվիրատուին կտրամադրի ծառայությունների կատարման Հարկային հաշիվ, ինչը չի դադարեցնի Կատարողի կողմից պայմանագրային պարտավորությունների իրականացումը Կայքի աշխատանքի ամբողջ ժամանակահատվածում:

3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 Կատարողի իրավունքներն ու պարտավորությունները

- 3.1.1 Կատարողը պարտավորվում է ապահովել Կայքի անխափան գործունեությունը և անվտանգությունը, ինչպես նաև կատարել դրա գործունեության հետ կապված բոլոր դրամական ծախսերը:
- 3.1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին խորհրդատվություն տրամադրել էջի (էջերի) կառավարման հարցում, ինչպես նաև լայնորեն օգնել և աջակցել առաջացած խնդիրների լուծման և կարգավորման մեջ:
- 3.1.3 Կատարողն իրեն իրավունք է վերապահում անբարոյական նյութերի տեղադրման դեպքում անհապաղ հեռացնել դրանք, իսկ փաստի կրկնման դեպքում միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ չկրելով ոչ մի նյութական կամ այլ պատասխանատվություն Պատվիրատուի առաջ:

3.2 Պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները

- 3.2.1 Պատվիրատուն պարտավորվում է սխալ և անբարոյական նյութեր չբեռնել Կայքի իրեն տրամադրված էջում: Պատվիրատուն լիովին պատասխանատվություն է կրում իր կողմից տեղադրված բոլոր տեղեկությունների և դրանցից բխող հետևանքների համար:

Անբարոյական նյութերի տեղադրման դեպքում Պատվիրատուի հանդեպ կարող է կիրառվել սույն Պայմանագրի 3.1.3 կետը:

- 3.2.2 **«Արտոնյալ Հաշիվ»** ծառայության ակտիվացման **Լոգին և Գաղտնաբառ** ստանալուց հետո Պատվիրատուն պարտավորվում է ծանոթանալ էջի կառավարման հնարավորություններին և հաստատել Կատարողի կողմից դուրս գրված Հարկային հաշիվը:
- 3.2.3 **«Արտոնյալ Հաշիվ»** ծառայության ակտիվացումը հնարավորություն է տալիս Պատվիրատուին օգտվել որոնման արդյունքներում Կայքի **«Բարձր Առաջնայնության Հաշիվ»** ծառայությունից, որը ժամկետային բնույթ է կրում: Այս ծառայության մատուցման պայմաններին կարելի է ծանոթանալ Կայքի համապատասխան բաժնում:

4. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

- 4.1 Պայմանագիրը կարող է լուծվել Պատվիրատուի նախաձեռնությամբ՝ գրավոր պահանջով ցանկացած պահին: Այդ դեպքում Կատարողը ոչ մի նյութական կամ այլ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի առաջ:
- 4.2 Եթե Պայմանագրի լուծումը կատարվում է Կատարողի նախաձեռնությամբ, բայց ոչ 3.1.3 կամ 5.1 կետերի հիման վրա, ապա վիճելի հարցերը կարգավորվում են համաձայն 5.2 կետի:

5. Այլ Դրույթներ

- 5.1 Անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով (Ֆորս-Մաժոր)՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ամբողջությամբ կամ ժամանակավորապես անհնարինության դեպքում, կողմերն ազատվում են պատասխանատվությունից: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլ անկանխատեսելի իրավիճակները, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացումը: Այս կետը վերաբերում է Երևան քաղաքին և Հայաստանին («Կամֆի» ՄՊԸ-ի գործունեության մասով) և հոսթինքի տրամադրման մասով՝ ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում գրանցված Namecheap LLC-ի սերվերի տարածաշրջանին:
- 5.2 Պայմանագրով չկարգավորվող իրավահարաբերությունները կամ ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով, դատական կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ ընդունված այլ ձևերով:
- 5.3 Կատարողը ոչ մի պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից երրորդ կողմին հասցրած որևէ վնասի համար, ինչը կարող է առաջանալ նրա կողմից էջի օգտագործման կամ հիմնական գործունեության ծավալման արդյունքում:
- 5.4 Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

Պայմանագրերը կնքվում են հետևյալ տարբերակներով

- Առցանց՝ էլեկտրոնային ստորագրության միջոցով (ID Card)
- Էլեկտրոնային փոստի միջոցով՝ սկանավորման տարբերակով
- Ավանդական ճանապարհով